Գիտություն

ՄԱՅԻՍ
№ 5
(294)
2016 թ.

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉԸ

(ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի 80-ամյակի առթիվ)

ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Նախագահ Սերժ Սարգսյանն մայիսի 1-ին շնորհավորական ուղերձ է հղել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանին՝ ծննդյան 80-ամյակի առթիվ:

«Մեծ է Ձեր ավանդը Հայաստանում ռադիոֆիզիկայի զարգացման ասպարեզում: Բարձր գնահատականի է արժանի Ձեր երկարամյա գիտական ու մանկավարժական գործունեությունը:

Տարիներ շարունակ ղեկավարելով Երևանի պետական համալսարանը, այնուհետև Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան՝ Ձեր նշանակալի նպաստն եք բերում մեր երկրում կրթության և գիտության կազմակերպման կարևորագույն գործում:

Մաղթում եմ Ձեզ առողջություն, անսպառ ուժ ու եռանդ և հաջողություններ Ձեր հայրենանվեր գործունեության մեջ»

2016 թ. ՄԱՅԻՍԻ 1-ին լրացավ ՀՀ ԳԱԱ նախագահ, քվանտային էլեկտրոնիկայի, ռադիոֆիզիկայի և ռադիոաստղագիտության բնագավառի վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի և Ուկրաինայի պետական մրցանակների դափնեկիր Ռադիկ Մարտիրոսյանի ծննդյան 80-ամյակը:

Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը մեծ ավանդ ունի երկրի գիտության և կրթության ոլորտներում, ինչի համար արժանացել է մտավորականության և հասարակության լայն շրջանների բարձր գնահատականին ու խորին հարգանքին:

Ծանրակշիռ այդ վաստակին նա հասել է կեսդարյա դժվարին, լարված ու պատասխանատու աշխատանքներում՝ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի փոխտնօրենի, ավելի քան քառորդդար՝ տնօրենի, մայր բուհի ռեկտորի, ազգային ակադեմիայի նախագահի պաշտոններում՝ ամենուրեք դրսևորելով անմնացորդ նվիրում, բարձր պատասխանատվություն և հաստատակամություն:

Ռ. Մարտիրոսյանը ծնվել է 1936 թ. մայիսի 1-ին, Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում, բանվորի ընտանիքում: 1953 թ. ավարտել է հայրենի գյուղի դպրոցը, իսկ 1958 թ.՝ Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը՝ աստղաֆիզիկոսի որակավորմամբ:

Նրա համար բախտորոշ էր ասպիրանտական ուսումնառությունն ու մասնագիտացումը Մոսկվայում: Ռ. Մարտիրոսյանի գիտական ղեկավարությունը ստանձնում է համաշխարհային ճանաչում ունեցող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Ա.Մ.Պրոխորովը:

Խորը ու հիմնարար պատրաստություն ստանալով՝ նա հենց Մոսկվայում կատարել է մի շարք գիտական ուշագրավ հետազոտություններ և դարձել ռադիոաստղագիտության բնագավառում քվանտային ուժեղարարների կիրառման առաջամարտիկներից մեկը: Նրա կողմից մշակված 21սմ ալիքի երկարություն ունեցող քվանտային ուժեղարարը Խորհրդային Միությունում առաջինն է կիրառվել ռադիոաստղագիտության մեջ:

1964 թ. Ռ. Մարտիրոսյանն իր աշխատանքային գործունեությունը շարունակել է հայրենիքում՝ ՀԽՍՀ ԳԱ նորաստեղծ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտում, որտեղ հիմնել է էլեկտրամագնիսական ալիքի գերբարձր հաճախականությունների տարբեր տիրույթներում քվանտային ուժեղարարների ստեղծման համար անհրաժեշտ նոր ակտիվ նյութերի ուսումնասիրության գիտական նոր ուղղություն: Մասնագիտական մեծ հետաքրքրություն են ներկայացնում ռելաքսացիոն հավանականությունների վրա հիմնված ակտիվ բյուրեղների ուժեղարարային բնութագրերի որոշման Ռ. Մարտիրոսյանի զարգացրած նոր մեթոդը և այդ մեթոդի վրա հիմնված պարամագնիսական բյուրեղների բազմակողմանի հետազոտությունները:

Ռ. Մարտիրոսյանն առաջարկել և գործնականում իրականացրել է քվանտային ուժեղարարների արդյունավետության մեծացման նոր եղանակներ: Նա առաջինն է հետազոտել երկու տարբեր հաճախություններով ազդանշանների միաժամանակյա ուժեղացում ապահովող ինվերսիայի եղանակը և այն փորձնականորեն իրականացրել ալիքի երկարության 21 սմ և 3 սմ տիրույթներում:

Ալիքի երկարության միլիմետրանոց տիրույթի քվանտային ուժեղարարների ֆիզիկական հիմունքների հիմնարար հետազոտություններին նվիրված Ռ. Մարտիրոսյանի աշխատանքների շարքն արժանացել է Ուկրաինայի պետական մրցանակի՝ գիտության և տեխնիկայի բնագավառում:

Գիտության մեջ հիմնավոր ներդրումները հիմք են դարձել, որ Ռ. Մարտիրոսյանն ընտրվի Հայաստանի ԳԱ թղթակից (1986 թ.), ապա իսկական անդամ (1990 թ.):

Նրա ղեկավարությամբ ՀԽՍՀ ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտն ակտիվորեն մասնակցել է միութենական և միջազգային մի շարք ծրագրերի: Նրա անմիջական ղեկավարությամբ ստեղծված գերբարձր հաճախականություններով աշխատող բարձր զգայունությամբ ռադիոհամակարգերը լայնորեն կիրառվել են երկրի բնական պաշարների հետազոտման «Ինտերկոսմոս», «Պրիրոդա», «Օկեան» տիեզերական ծրագրերում, ինստիտուտում մշակված գիտական սարքավորումները՝ ռադիոաստղագիտական, բժշկակենսաբանական և այլ հետազոտություններում:

Հատկապես արգասաբեր է եղել Ռ. Մարտիրոսյանի մասնակցությունը տիեզերական տարածության ուսումնասիրման ծրագրերին, մասնավորապես «Վեգա» նախագծի իրականացմանը:

Ռ. Մարտիրոսյանի գիտական ղեկավարությամբ 1987 թ. սկսած ՌՖԷԻ-ում կատարվել են բարձրջերմաստիճանային գերհաղորդականությանը նվիրված հիմնարար և կիրառական բնույթի հետազոտություններ:

Ռ. Մարտիրոսյանի և նրա աշակերտների՝ մեծ զգայունությամբ ԳԲՀ ընդունիչ համակարգերի մշակման և ներդրման աշխատանքները 1988 թ. արժանացել են ՀՀ պետական մրցանակի՝ գիտության և տեխնիկայի բնագավառում:

Ռ. Մարտիրոսյանը գիտական գործունեությունը մշտապես զուգակցել է մանկավարժական ➤ 2

Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը Արցախի Մարտակերտի շրջանի հայրենի Մատաղիս գյուղի, իր անունը կրող դպրոցի աշակերտների հետ:

ԱԿԱՆԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ...

➢1 բեղմնավոր աշխատանքի հետ:

1965 թվականից մինչ օրս անընդմեջ, ԵՊՀ-ում նա դասավանդում է ռադիոֆիզիկայի ընդհանուր և հատուկ դասընթացներ: Նրա նախաձեռնությամբ 1983 թ. ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետում ստեղծվել է ԳԲՀ ռադիոֆիզիկայի ամբիոն (ներկայումս՝ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոն), որը Ռ. Մարտիրոսյանը ղեկավարում է առ այսօր:

1993 թ. ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը նշանակվել է ԵՊՀ ռեկտոր: Կարճ ժամանակահատվածում նա մշակել է գիտական հետազոտությունների և կրթության նյութատեխնիկական բազայի զարգացման դժվարությունների հաղթահարման և բարձր որակավորմամբ մասնագետների պատրաստման ծրագրեր:

Նրա ղեկավարման տասներեք տարիներին ԵՊՀ-ում բացվել են նոր մասնագիտացումներ ու ֆակուլտետներ, բարձրացվել է ուսման որակը:

Օգտվելով անկախության ընձեռած հնարավորություններից՝ Ռ. Մարտիրոսյանը կապեր է հաստատել և արդյունավետ համագործակցություն ստեղծել տարբեր երկրների մի շարք նշանավոր համալսարանների հետ:

Անգամ Հայաստանի ռեկտորների խորհուրդը նրա նախաձեռնությամբ դարձել է գործուն ու կենսունակ հաստատություն:

2006 թ. Ռ. Մարտիրոսյանն ընտրվել է ՀՀ ԳԱԱ նախագահ: Հետխորհրդային տարածքում գիտության և գիտական գործունեության խաթարված վարկը, թերֆինանսավորումը, մասնագետների արտահոսքը պահանջում էին ակադեմիայի կառուցվածքի օպտիմալացում, նոր պայմաններում գիտական հետազոտությունների իրավական հենքի ստեղծում, զարգացման հեռանկարային ուղղությունների կանխորոշման հետ կապված վերափոխումներ:

Անցած տասը տարիների ընթացքում ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ կատարվել են կարևոր քայլեր ակադեմիական հանրության համախմբման, ԳԱԱ ներուժի պահպանման, միջազգային գիտական կապերի ընդլայնման ու բազմաբնույթ դարձնելու գործում: Առանձնապես հիշատակելի են օրենսդրական ծրագրի իրականացման, տնօրենների կազմի երիտասարդացման, հեռանկարային գիտական ուղղությունների կողմնորոշման, նոր տեխնոլոգիաների մշակման ու ներդրման, ինովացիոն գործունեության զարգացման ոլորտները: Այդ տարիներին նա մեծ ուշադրություն է դարձրել հիմնարար, կիրառական (ինովացիոն) հետազոտությունների համամասնությունների հաշվեկշռին: Բազմաթիվ առաջարկներ են ներկայացվել պետական և գործարար կառույցներին, բարձրացվել է ՀՀ ԳԱԱ ցանցային և գիտական սարքավորումների որակը, Բյուրականի երկարամյա վերականգնողական աշխատանքներ պահանջած 2.6 մ դիտակը ստացել է նոր կյանք, տեղադրվել են նորագույն սարքավորումներ բնական գիտությունների ոլորտում: Ծանրակշիռ է ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանի դերը ՀՀ ԳԱԱ արտասահմանյան հայ անդամների ինստիտուտի ստեղծման գործում:

Վերջին տարիներին բազմաթիվ նոր կապեր են հաստատվել միջազգային գիտական կենտրոնների հետ՝ հայաստանյան գիտնականների համար բացելով համատեղ հետազոտությունների ուղիներ:

Ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն իրեն բնորոշ նվիրվածությամբ դեպի գիտությունը, պատասխանատվությամբ դեպի բարդ խնդիրների լուծման ճանապարհների ընտրությունը, կարողացել է էապես նպաստել համակարգի այսօրվա գիտական հաջողություններին:

Ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը, ունենալով բազմամյա գիտական և գիտակազմակերպական փորձ ակադեմիական և համալսարանական համակարգերում, մշտապես նվիրվածությամբ և պատասխանատվությամբ է վերաբերվել նոր գիտական ուղղությունների զարգացմանը:

Անցած տասնամյակում Ռ. Մարտիրոսյանի հետևողական գործունեության շնորհիվ ՀՀ ԳԱԱ համակարգի սոցիալական ոլորտում կատարվել են զգալի բարեփոխումներ:

Ռադիկ Մարտիրոսյանն ավելի քան 200 գիտական աշխատանքի, Շվեդիայում և ԱՄՆ-ում հրատարակված 2 մենագրության հեղինակ է: Հայրենական բարձրագույն կրթությանն ու գիտությանը մատուցած անուրանալի ծառայությունների, հասարակական ակտիվ գործունեության համար ակադեմիկոսն արժանացել է բազմաթիվ մրցանակների, մեդալների ու շքանշանների, պատվոգրերի ու շնորհակալագրերի, նրա գիտակազմակերպական ու մանկավարժական գործունեությունն արժանացել է Խորհրդային Միության, Հայաստանի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարական բարձր պարգևների: Նա պարգևատրվել է «Սուրբ Մեսրոպ Մաշտոց», «Հոկտեմբերյան հեղափոխություն», «Պատվո նշան» շքանշաններով:

Հանրապետության գիտական հասարակայնությունը և ողջ մտավորականությունը սրտանց շնորհավորում են Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանին, մաղթում առողջություն ու ստեղծագործական նորանոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ

ՄԵԾԱՐՈՒՄ

Մայիսի 3-ին ՀՀ ԳԱԱ նախագահության ընդլայնված նիստը նվիրված էր ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ 80-ամյա հոբելյանին:

Նիստը վարող ՀՀ ԳԱԱ նախագահի տեղակալ, ակադեմիկոս Յուրի Շուքուրյանը ներկաների անունից ջերմորեն շնորհավորեց հոբելյարին, և հակիրճ ներկայացրեց Ռադիկ Մարտիրոսյանի բեղմնավոր կյանքի դրվագները և այն արժանի գնահատականը, որին հոբելյարը արժանացել է իր երկարամյա նվիրված աշխատանքի և հայրենական գիտությանը մատուցած ծառայությունների համար:

Այնուհետև ելույթ ունեցավ ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Չիլինգարյանը: Ջերմորեն շնորհավորելով և նոր հաջողություններ մաղթելով հոբելյարին գիտության, գիտության կազմակերպման, մանկավարժության ոլորտներում, Յուրի Չիլինգարյանը համառոտ ներկայացրեց Ռադիկ Մարտիրոսյանի գիտական վաստակը, նրա բեղմնավոր գործունեությունը՝ որպես ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի բազմամյա տնօրեն, Երևանի պետական համալսարանի ռեկտոր և ՀՀ ԳԱԱ նախագահ: Նա նշեց, որ Ռադիկ Մարտիրոսյանը գիտական դպրոցի հիմնադիր է, կրթության ոլորտի փայլուն կազմակերպիչ և նորարար ու մեծ ավանդ ունի գիտությունների ազգային ակադեմիայի վարկն ու հեղինակությունը բարձրացնելու, միջազգային կապերի ամրապնդման, կադրերի երիտասարդացման և նոր հաջողությունների հիմքերի ստեղծման գործում:

Ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին շնորհավորանքի ջերմ խոսքեց ասացին ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վիլեն Հակոբյանը, Քիմիայի և Երկրի մասին գիտությունների ակադեմիկոս-քարտուղար Լևոն Թավադյանը:

Հոբելյարին ողջունեցին, շնորհավորական ուղերձներ հանձնեցին երկու տասնյակից ավելի ինստիտուտների և գիտաարատադրական կենտրոնների տնօրենները: Շնորհավորանքները ջերմ էին, սրտաբուխ և մանավանդ՝ անչափ անկեղծ:

Լսելով տնօրենների ելույթները, տողերիս հեղինակը հանկարծ գնահատեց, թե որքան օգտակար է եղել, որքան գործ է արել Ռադիկ Մարտիրոսյանը: Նոր շենքերի կառուցում, ակադեմիական շենքերը օտարումից փրկում, ջեռուցում, ամենամեծ աստղադիտակի նորոգում, երիտասարդ գիտնականների բնակարանային պայմանների բարելավում, տեխնիկական միջոցների, լաբորատորիաների վերազինում, Աղվերանի հանգստյան տան լիարժեք օգտագործում, արձակուրդների օրերի ավելացում, գիտական կոչումների համար հավելավճարների ավելացում, երիտասարդ մասնագետների պատրաստման որակի բարձրացում, միջազգային համագործակցության ընդարձակում, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների ինստիտուտի կայացում և բազում--բազում շնորհներ, որոնք ՀՀ ԳԱԱ նախագահը ծրագրել և իրականացրել է, քանի որ խոստացել է, քանի որ հաստատակամ է, նպատակասլաց, մարդ, որ իր ողջ գիտակցական կյանքը նվիրել է գիտությանը, հայրենի գիտության առաջընթացին և նրա միջազգային հեղինակության բարձրացմանը:

Երկու տասնամյակ առաջ արժեզրկված գիտությունը Ռադիկ Մարտիրոսյանի և ակադեմիական համակարգի արդյունավետ աշխատանքի շնորհիվ այսօր վերագտնում է իր երբեմնի բարձր վարկը, աճում է հարգանքը գիտության աշխատողի և գիտության նկատմամբ ընդհանրապես:

Ելույթները յուրովի ամփոփեց անվանի պատմաբան, ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանը:

Ինչպես նշեցինք, շնորհավորանքի խոսքերը, ողջույնի ուղերձները, առողջության, աշխատանքային հետագա ձեռքբերումների մաղթանքները սրտանց էին, ազնիվ և շռայլ: Այս էր պատճառը, որ երբ խոսքը տրվեց մեծարգո հոբելյարին, նրա առաջին բառերը եղան՝ Շատ շնորհակալ եմ:

Այնուհետև Ռադիկ Մարտիրոսյանը խոսեց մասնագիտության ընտրության, իր մեծ ուսուցիչներ Վիկտոր Համբարձումյանի և Նոբելյան մրցանակի դափնեկիր, լազերային ֆիզիկայի հիմնադիր Ա. Մ. Պրոխորովի մասին, որը Մոսկվայում ասպիրանտ Մարտիրոսյանի ղեկավարն էր:

Հոբելյարի շնորհակալության խոսքը պարզ էր, մտերմիկ, որը ընդմիջվում էր բարի հումորով: Երբ նա աշխատում էր Բյուրականի աստղադիտարանում և պատրաստվում աստղաֆիզիկոս դառնալ, մի գիշեր նրան առաջարկեցին մեծ դիտակով նկարել երկնքի աստղերը: Փորձառու աստղագետի օգնությամբ նա կատարեց առաջադրանքը և առավոտյան շտապեց լաբորատորիա: Երևակումից հետո պարզվեց, որ թիթեղները բացարձակապես մաքուր են և ոչինչ չի նկարվել: Նրան ուղարկեցին ստուգելու, թե արդյոք օբյեկտիվի կափարիչը հանված եղե՞լ է: Պարզվեց՝ ոչ: Հենց այդ օրն էլ Ռադիկ Մարտիրոսյանը փոխեց աստղաֆիզիկոս դառնալու որոշումը և դարձավ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի աշխատակից: Ինչպիսի զարմանալի ճիշտ ընտրություն: Սակայն, ինչպես խոստովանում է Ռադիկ Մարտիրոսյանը, աստղագիտության նկատմամբ իր հակումը մինչև օրս էլ իր հետ է: Վերջում նա կրկին ու կրկին շնորհակալություն հայտնեց հավաքվածներին՝ ջերմ մաղթանքների, սրտառուչ խոսքերի համար և ընդգծեց, որ ակադեմիայի հաջողությունները բոլորի աշխատանքի արդյունքն են:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի մեծարման արարողությունը շարունակվեց մայիսի 4-ին, երբ ԳԱԱ-ում մեկնարկեց «Միկրոալիքային և ՏՀՁ-ային տեխնոլոգիաներ, հեռահաղորդակցություն և ֆոտոնիկա» միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանի 80-ամյա հոբելյանին:

Գիտաժողովի մեկնարկին ներկա էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը, ՀՀ ԳԱԱ նախագահ Լևոն Մկրտչյանը, հանրապետության բուհերի ռեկտորներ, հյուրեր արտերկրներից, մտավորականության ներկայացուցիչներ:

Գիտաժողովը սկսվեց տերունական աղոթքով: Բացելով նիստը, ՀՀ ԳԱԱ նախագահի տեղակալ Յուրի Շուքուրյանը հակիրճ ներկայացրեց հոբելյարի գիտական վաստակը և գիտակազմակեր- ➢3

ՀՀ ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՆՐԱԳԻՏԱՐԱՆ

Ներկայացնում է ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժինը

Սերգեյ Գուրգենի ԿԱԶԱՐՅԱՆ

Լոնդոնի Կայսերական քոլեջի ֆիզիկական քիմիայի պրոֆեսոր Սերգեյ Կազարյանը ծնվել է 1958 թ. հունվարի 1-ին, Ղազախստանում: Հայրը՝ Գուրգեն Կազարյանը, Հայաստանում ավարտելով ԵՊՀ երկրաբանության ֆակուլտետը, աշխատանքի էր մեկնել Ղազախստան: Հենց այնտեղ էլ հանդիպել էր Սերգեյ Կազարյանի մորը: Հայրը ղեկավարում էր երկրաբանական խոշոր կազմակերպություն, որը զբաղված էր Ղազախստանի ընդերքի ուսումնասիրմամբ:

Դպրոցում սովորելու տարիներին Սերգեյ Կազարյանը աչքի էր ընկնում իր ունակություններով, որի գրավականներից մեկն էլ եղավ 8-րդ դասարանում մաթեմատիկայի շրջանային օլիմպիադայում հաղթանակելը, ինչի արդյունքում նա հրավեր ստացավ մեկնել Նովոսիբիրսկ՝ շարունակելու կրթությունն ակադեմիական քաղաքում գործող ֆիզիկամաթեմատիկական դպրոցում, ուր դասավանդումը և ուսուցման պայմանները, ըստ նրա, լավագույնն էին Խորհրդային Միությունում: Այնտեղ էլ նա ընդունվեց համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետ: Բայց հայրը՝ Գուրգեն Կազարյանը, ցանկանում էր վերադառնալ Հայաստան, և 3 տարի Նովոսիբիրսկում կրթություն ստանալուց հետո Սերգեյ Կազարյանը տեղափոխվեց Երևան և կրթությունը շարունակեց Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետում: ԲՈՒՀ-ն ավարտելուց հետո նա երկու տարի աշխատել է Երևանում՝ Քիմիական ռեակտիվների և հատուկ մաքրության քիմիական նյութերի գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղում:

Կազարյանը Հայաստանում ապրեց ընդամենը 4 տարի, բայց այդ տարիները էական նշանակություն ունեցան նրա հետագա գործունեության վրա, այդ թվում նաև մասնագիտական վերջնական կողմնորոշման. նա ֆիզիկայից աստիճանաբար անցում կատարեց դեպի քիմիա:

Այնուհետև Մոսկվայի գիտությունների ակադեմիայից հրավեր ստացավ գիտնական Վիլեն Ալեքսանյանից՝ վերապատրաստում անցնելու Մոսկվայում: Այստեղ Կազարյանը ընդունվեց ասպիրանտուրա և պաշտպանեց գիտական թեզը՝ «Interaction of transition metal complexes with proton donors in solution of liquid inert gases» թեմայով (1987թ.), աշխատանքի անցավ ՌԳԱ սպեկտրոսկոպիայի ինստիտուտում: 1991թ. Սերգեյ Կազարյանը համատեղ գրանտ ստացավ ՆԱՏՕ-ի և Լոնդոնի թագավորական միության կողմից, որի շնորհիվ էլ երիտասարդ գիտնականը հայտնվեց Մեծ Բրիտանիայում: Նրան հրավիրել էր ոլորտի հայտնի քիմիկոս Մարտին Պոլյակոֆը, ով ներկայումս Թագավորական միության փոխնախագահն է:

1994թ. Կազարյանը աշխատանքային հրավեր է ստանում Միացյալ Նահանգներից և, չորս տարի աշխատելով Ատլանտայի Ջորջիայի Տեխնոլոգիական համալսարանում, 1998 թ. կրկին վերադառնում է Մեծ Բրիտանիա: Վերադառնալով Անգլիա Սերգեյ Կազարյանը սկսում է զբաղվել դասավանդմամբ: Նա դասախոսություններ էր կարդում Լոնդոնի Կայսերական քոլեջում, որը աշխարհի լավագույն համալսարաններից մեկն է: Մի քանի տարի անց նա ստանում է պրոֆեսորի կոչում: Այդ տարիներին գիտնականի ուշադրության ծիրում հայտնվեց նաև սպեկտրոսկոպիայի ուսումնասիրությունը՝ քիմիական պատկերներ (chemical imaging) ստանալու տեսանկյունից:

Սերգեյ Կազարյանը այսօր մի շարք գիտական ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ է, ինչպես նաև հանդիսանում է Fellow of the Royal Society of Chemistry (UK), Fellow of the Society for Applied Spectroscopy (USA). Կազարյանը այս պահին համագործակցում է BASF, BP հայտնի ընկերությունների հետ, իրականացվում են համատեղ հետազոտություններ:

2016 թ. ապրիլին Քեմբրիջի համալսարանում տեղի ունեցած գիտաժողովի շրջանակներում Կազարյանին շնորհվել է Սեր Ջորջ Ստոքսի անվան մեդալ, որը տրվում է անալիտիկ քիմիայի բնագավառում ունեցած ակնառու ներդրման համար:

Սերգեյ Կազարյանը համագործակցել է Հայաստանի իր ոլորտի մի շարք գիտնականների հետ: Նա արդյունավետ է համարում Գարի Մարտիրոսյանի հետ կատարած համատեղ աշխատանքները: Գ. Մարտիրոսյանը թեկնածուական ատենախոսությունից հետո մեկնել է Կազարյանի մոտ և շուրջ մեկ տարի իրականացրել է հետազոտություններ, տպագրել հոդվածներ:

Կազարյանի ղեկավարությամբ շուրջ 30 երիտասարդ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություն: Նա հեղինակ է շուրջ 200 գիտական հոդվածների, ինչպես նաև 15 գրքի համահեղինակ է:

Սերգեյ Կազարյանի գերակա նպատակներից է այսօր Հայաստանում բացել իր լաբորատորիան, որը կնպաստի համագործակցության խորացմանը թե՛ Մատենադարանի, թե՛ մյուս թանգարանների ու նաև ներքին գործերի նախարարության հետ:

Այսօր Սերգեյ Կազարյանը սերտորեն համագործակցում է Մատենադարանի հետ՝ մշակութային արժեքների պահպանման և վերականգնման շրջանակում՝ փորձելով ցույց տալ, թե ինչպես է քիմիական կառուցվածքը փոփոխվում դեգրադացիայի ժամանակ: Կազարյանը փորձում է համագործակցել նաև Փորձաքննությունների ազգային բյուրոյի հետ (պրոֆեսոր Արտաշես Ջավադյանի): Նա առաջարկում է օգտագործել մի համակարգ, որի շնորհիվ հնարավոր է ուսումնասիրել մատնահետքի քիմիական կառուցվածքը, որը պետք կգա նաև քրեագիտության բնագավառում:

Նրա մեթոդներն այսօր ակտիվորեն կիրառվում են Լոնդոնի Ազգային պատկերասրահի և մի շարք այլ թանգարաններում, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի Home Office-ը մեծապես կիրառում է Կազարյանի գիտական ձեռքբերումները ոստիկանական համակարգում:

Կազարյանի աղջիկը՝ Աննան ևս հավատարիմ է իր արմատներին, նա մասնակցել է «Birthright Armenia» ծրագրին և որոշ ժամանակ աշխատել է մանկական հիվանդանոցում:

Հաշվի առնելով Սերգեյ Կազարյանի գիտական, մանկավարժական մեծ վաստակը, ինչպես նաև մայր հայրենիքի հետ սերտ կապերը, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան 2014 թվականին նրան ընտրեց ԳԱԱ արտասահմանյան անդամ: Ընտրվելով ԳԱԱ արտասահմանյան անդամ, Ս.Կազարյանը առանձնակի նվիրումով է համագործակցում Հայաստանի գիտական խմբերի և կազմակերպությունների հետ:

Գոհար ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ սփյուռքի բաժնի
գիտաշխատող, պ.գ.թ. դոցենտ

Մեծարում

➢2

պական գործունեության որոշ դրվագներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդը շնորհավորանքի խոսք հղեց հոբելյարին և Հայրապետական օրհնանք՝ մաղթելով բարի աշխատանք և հաջողություններ՝ ի փառս հայ գիտության:

Այնուհետև հոբելյարին շնորհավորեց և ջերմ մաղթանքներ փոխանցեց ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը: Ֆիզիկայի և աստղաֆիզիկայի գիտ. բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Չիլինգարյանը լուսանկարների ցուցադրությամբ ներկայացրեց Ռադիկ Մարտիրոսյանի կյանքի ուղին՝ մանկությունից մինչև այսօր: ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի ողջույնից հետո, ամբիոնին մոտեցավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Հրանտ Մաթևոսյանը: Նա նշեց, որ Ռադիկ Մարտիրոսյանին շնորհավորել են ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը, բոլոր նախարարությունների, պետական կոմիտեների և գերատեսչությունների ղեկավարները: Շնորհավորական հեռագրեր են ստացվել Մոլդովայից, Բելոռուսից, Դոնի-Ռոստովի մարզի նահանգապետից, Ուկրաինայից, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան

անդամներից: Հրանտ Մաթևոսյանը վերջում նիստի մասնակիցներին ներկայացրեց ՀՀ ԳԱԱ նախագահության հոբելյարին ուղղված ողջույնի ուղերձի վերջին հատվածը.

«Թանկագին Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյան, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի գիտական հասարակության և ակադեմիայի նախագահության անունից սրտանց շնորհավորում ենք Ձեր 80-ամյա հոբելյանը, որը Դուք դիմավորում ենք ստեղծագործական ներուժի ծաղկման ավյունով և ցանկանում ենք առողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ»:

Վաստակաշատ հոբելյարին շնորհավորեցին և ողջույնի ուղերձներ փոխանցվեցին Երևանի առաջատար համալսարանների ռեկտորատների կողմից: Ռադիկ Մարտիրոսյանին հանձնվեցին արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ Սահմանադրական դատարանի ուղերձները, Երևանի պետական կոնսերվատորիայի ուղերձը և ռեկտորատի որոշումը՝ Ռ. Մարտիպոսյանին կոնսերվատորիայի պրոֆեսորի կոչում շնորհելու մասին:

Հոբելյարին շնորհավորեցին ՀՀ ԲՈՀ-ի նախագահ Լիլիթ Արզումանյանը, ՀՀ ԳԱԱ արտասահման անդամ Գարեգին Մարգարյանը և ուրիշներ:

Բուռն ծափահարությունների ուղեկցությամբ վաստակաշատ հոբելյարը մոտեցավ ամբիոնին: Նա ջերմ շնորհակալություն հայտնեց մի քիչ չափազանցված գովեստների համար, թեև նշեց, որ դա էլ է երբեմն պետք մարդուն: Նա խոսեց իր հայրենի գյուղի, աշխատավոր ծնողների, խորհրդային պարտուսի օգուտների, իր մասնագիտության ընտրության մասին, որը եղել է ճակատագրի կամոք: Վերջում նա շնորհակալություն հայտնեց բոլոր այն մարդկանց, որոնց հետ երբևէ աշխատել է: Նրան միշտ հանդիպել են լավ մարդիկ, որոնց մարդկային գլխավոր արժանիքը եղել է բարությունը և աշխատասիրությունը:

ՄԵՐ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՅԻՍԸ

Դիպվա՞ծ է, պատահականությո՞ւն, թե՞ խորհուրդ երկնային, սակայն այնպես է ստացվել, որ մեր հաղթանակները կայացել են մայիսին: Եվ այդ է պատճառը, որ գարնան այդ ամիսը մեզ համար տոնական է, բերկրալի ու ցնծագին, զի հենց մայիսին են երկնվել մեր ժողովրդի ոգու թռիչքը, համազգային սխրանքն ու հանուն հայրենիի մաքառելու, հերոսաբար կռվելու և ոսոխին սարսափի մատնելու մեր անկոտրում կամքը: Եվ մեր գոյության առհավատչյան եղել է ժամանակ առ ժամանակ ժայթքած երկնային այն թռիչքը, համաժողովրդական սխրանքի այն վեհ պոռթկումը, որի բանաձևը, խորհուրդ խորինը այն գյուտն էր, ապրելու այն հնարը, որ գտնվեց Ավարայրում՝ «Մահ անիմաց՝ մահ է, մահ իմացիալ՝ անմահություն»:

Ասում են՝ պարսից հզոր արքան, հերթական ճակատամարտում հանդիպելով հայերի անձնուրաց դիմադրությանը, ասել է. «Հայե՛ր, Ահրիմանը ձեզ տանի, կռվում եք ապրեցե՛ք»:

Եվ մենք, սեղմված հզորագույն և արյունռուշտ տերությունների արանքում, կռվեցինք՝ հանուն հողի, հավատի, լեզվի, ցեղի, մեր միակ ու սուրբ հայրենիքի: Եվ ապրեցինք, գոյատևեցինք և հասանք 21-րդ դար, որովհետև օրհասական պահին ուժ գտանք բռունցքվելու, միակամ ու միասնաբար կռվելու բոլոր այն ոսոխների ահռելի բանակների դեմ, որոնք դարեր շարունակ որոճացել են մեզ ոչնչացնելու, հայի անունն ու ազգանունը ջնջելու ծիվաղային մոլուցքը:

Այո՛, մենք սկսեցինք կռվել, զի այդ էր մեր ցեղի, հող հայրենիի գոյատևման, պահպանման միակ հնարն ու նաև՝ սխրանքը:

451 թվական, մայիս... Ավարայրի դաշտում՝ Տղմուտ գետի ափին, անօրինակ սխրանքի փառավոր էջ գրեց հայոց փոքրաթիվ բանակը, որ Վարդանանց գլխավորությամբ օրհասական կռվի էր ելել պարսից ամենակուլ բանակ-խորշակի դեմ: Համազգային, համաժողովրդական նահատակության պատրաստ անօրինակ սխրանք էր դա, ապրելու, գոյատևելու, լեզուն և հավատը չուրանալու միասնական կամք և վճիռ, որ ստիպեց պարսից բռնապետությանը տեղի տալ և զիջել, հրաժարվել հավատն ու լեզուն, ինքնությունն ու լինելիությունն ուրանալու պահանջից:

Ավելի քան 1500 տարի Վարդանը, Վարդանանց հերոսամարտն ու Ավարայրի սխրանքը սերունդներ են կրթել, հային հայ պահել, ազգապահպանության, հերոսության սուրբ օրինակ ծառայել մեզ, և այսօր հանկարծ հայտնվում է մեկը, որն ուզում է ապացուցել, որ չի եղել Ավարայրը, Վարդանանց, համազգային սխրանքը: Չգիտեմ՝ ինչ անուն տամ սույն սրբապղծությանը, որ անգամ հակահարված չի ստանում...

Ավարայրը ոչ միայն մեծագույն սխրանք էր, այլև անմոռանալի դաս. ապրելու, գոյատևելու, իր հողի տերը լինելու և հայ մնալու համար պիտի կռվել:

Ցավոք, մենք ուշ-ուշ ենք հիշում այս մեծ դասը, խորհուրդը: Բայց երբ հիշել ենք ու զենք վերցրել, փրկվել ենք ջարդից, կոտորածից, ոչնչացումից: Վկան մեր առասպել դարձած ֆիդայիները, Սասունի, Վանի, Զեյթունի, Մարաշի, Մուսա լեռան հերոսամարտերը, որոնք փրկություն եղան հազար-հազարավոր հայերի համար:

...1918 թվական, մայիս... Մեր դարավոր թշնամին՝ երիցս անհիշյալ թուրք մարդասպանը, ներխուժեց փոքրիկ, անօգնական ու թշվառ Հայաստան, որ ավարտին հասցնի իր հրեշավոր ծրագիրը, երկրի երեսից ջնջի-վերացնի հայի անունն ու վերջին հային: Շատ իրական էր արյունարբու հրեշի դիվային զարհուրը: Մայիս ամիսն էր,

օրհասական և սարսափելի վտանգը կախվել էր մեր մի բուռ ժողովրդի վրա: Կորել էր հույսը... Սակայն հայ ժողովուրդը հիշեց իր պատմության դասերը. ապրելու համար պիտի կռվել: Եվ նա դարձավ միասնական, համախմբվեց, դարձավ միասնական մի հզոր բռունցք և համաժողովրդական կռվի ելավ իր դարավոր թշնամու դեմ: Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերում թուրքերը ջախջախիչ պարտություն կրեցին և դիմեցին փախուստի: Եվ նորից ապրեց հայ ցեղը, որովհետև փրկության կռիվ էր մղում:

Այո՛, ճիշտ էր ասել պարսից աշխարհակալ արքան՝ «Հայե՛ր, Ահրիմանը ձեզ տանի, կռվում եք՝ ապրեցե՛ք»:

Եվ մենք ապրեցինք, վերածնվեցինք մոխիրներից՝ որպես փյունիկ՝ ի հեճուկս դարավոր թշնամու, նրա գիշատիչ հայացքի առջև...

1945-ի մայիսին եկավ ամենասպասված, ամենաբաղձալի հաղթանակը ֆաշիստական Գերմանիայի դեմ, ավարտվեց մարդկային պատմության ամենադաժան և ամենաարյունահեղ պատերազմը:

Մայիսյան այդ լուսավոր ու մեծ հաղթանակի կռման սուրբ գործում իր արժանի ներդրումն ունեցան հայ ժողովրդի զավակները: Դա նաև մեր հաղթանակն էր, որովհետև փոքրաթիվ հայ ժողովրդի 600.000 զավակներ (նաև սփյուռքից) հերոսաբար կռվում էին Երկրորդ աշխարհամարտի խրամատներում: Հայ ժողովրդի 200 հազար զավակներ հերոսի մահով ընկան մարտի դաշտում:

Հայաստանի անկախացումից հետո մեր երկրի ղեկավարներից ոմանք հայտարարեցին, թե Մեծ հայրենականը մեր պատերազմը չէր, և ամոթանք էին շպրտում ռազմի դաշտում հերոսացած և հրաշքով տուն դարձած մեր վետերաններին: Հայրենիքի համար զոհված հայորդիների սուրբ հիշատակը անարգող այդ թափթփուկներին մեղադրելը կամ ամոթանք տալը ավելորդ զբաղմունք է: Ուղղակի պետք է ստուգել դրանց զեները, և միանշանակ կպարզվի, որ այդ պարոնների երակներով հայի արյուն չի հոսում:

Որովհետև հայ մարդը գիտեր, որ դա նաև մեր պատերազմն էր, որովհետև մենք կռվում էինք անհիշյալ թուրքին ժամանակին զորավիգ եղած, Մեծ եղեռնը խրախուսող Թուրքիայի մերձավոր դաշնակցի դեմ: Եղեռնի զոհերի որդիներն ու թոռները, հայ մարդը վրեժ էր լուծում իր անմեղ նահատակների համար:

Մենք գիտեինք նաև, որ ֆաշիստական Գերմանիայի դաշնակից Թուրքիայի 26 դիվիզիա, սահմանին կանգնած, սպասում էին Ստալինգրադի անկմանը, որպեսզի մտնեն Հայաստան և ավարտին հասցնեն 1915-ին իրագործած հայասպանության իրենց դիվային ծրագիրը: Ճշմարիտ հայի համար Մեծ հայրենականը նաև մեր պատերազմն էր, իսկ մայիսի հաղթանակը՝ մեր հաղթանակը՝ վաստակած և արժանապատիվ:

1992 թվական... Եվ էլի մայիս ամիս: Մայիսի 8-ին փառավոր հաղթանակով ավարտվեց հայրենի Շուշիի գրավման փառահեղ օպերացիան: Շուշին կրկին դարձավ մերը: Եվ այդ հաղթանակի կերտմանն իրենց մասնակցությունը բերին հերոս հայորդիները: Նրանք արցախյան ազատագրական պատերազմի օրհասական օրերին դարձան միակուռ բռունցք, միասնական, միակամ հայ ժողովրդի ազատագրական բանակ և զինուժ, որ գիտեին այն մեծ խորհուրդը, որ ապրելու, հայրենիքը պահելու համար մեզ միասնականություն է պետք և ազգովի կռվելու հզոր ոգի:

Այո՛, մենք կռվել գիտեինք: Այդ լավ գիտեն մեր դարավոր թշնամին և նրա փոքրիկ թուրք եղբայրը, որոնք հեռվից քստմնելի բորենիների նման ատամ են կրճտացնում և ատելությամբ որոճում սև ու մութ ծրագրեր: Իսկ երբեմն էլ, կարծես ստուգելու և փորձելու համար՝ դիմում է ագրեսիայի: Դրա ապացույցն էր ապրիլյան պատերազմը, որը շնորհիվ մեր զինվոր տղաների անձնազոհության և հերոսության, ավարտվեց թշնամու խայտառակ պարտությամբ: Այդ պարտադրված կռիվը խորհրդանշական մի սուրբ խորհրդով՝ նորից ապացուցվեց հայ ժողովրդի միասնականության փայլուն ապացույցով: Վտանգի պահին մենք կրկին ու կրկին դարձանք մեկ բռունցք:

Այո՛, մենք եղել ենք, կանք ու պիտի լինենք, որովհետև պատմությունը մեզ սուրբ դասեր է տվել՝ ապրելու համար պիտի միասնական լինել և կարողանանք կռվել:

Այդպես էլ պիտի ապրենք՝ կռվելով:

ՉՄՈՌԱՆԱՆՔ ՄԵՐ ՄԵԾԵՐԻ ԴԱՍԵՐԸ

Ավետիք ԻՍԱՀԱԿՅԱՆ

«Վերք Հայաստանի» մեր սխրանքների դյուցազնավեպն է

«Վերք Հայաստանի»-ն սովորական առումով գիրք չէ, իհարկե, նա վերք է իրոք՝ հայ մեծադժբախտ ժողովրդի դարավոր վերքը՝ ստացած թուրք, արաբ, ղզլբաշ բարբարոս, արյունարբու հորդաներից և նրանց իշխաններից:

Նա գիրք չէ. նա սիրտ է, տարերային զգացմունքներով զեղուն, ահագին սիրտ՝ Արարատյան նվիրական դաշտի վրա փռված, ըմբոստ, զայրալից և վշտագին, Մասիսի բարձունքների վրա վառվող, մխացող սիրտ... «Վերք Հայաստանի»-ն նաև մեր բողոքի, մեր ըմբոստության, մեր գոյամարտի հերոսապատումն է: Նա մեր դարի շողշողուն էպոսն է, մեր սխրագործությունների դյուցազնավեպը:

Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ, ինչպես չորս բարձր սյուներ, կրել են հայ ժողովրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա իդեալները: Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Եղիշեի Վարդանանց պատմությունը, Նարեկացու խոսքը անմահության և հավերժության հետ և Աբովյանի «Վերքը»: Այս նվիրական գրքի մեջ հրեղեն լեզվով արտահայտված է մեր ժողովրդի խորագին վիշտը, նրա պայքարը և անշիջանելի պաթոսը:

Համո ՍԱՀՅԱՆ

Օրհնում ենք և ասում ենք . . .

Միշտ էլ սարսափի պես մի բան եմ զգացել մեր ժողովրդի մասին խոսք ասելուց առաջ... վախեցել եմ, որովհետև նրանք հոգնակի խարիսխ են, հոգնանիստ, հոգնագագաթ և հոգնահորիզոն:

Նրանք՝ այդ մեծերը, միայն իրենց ժամանակի վկաներն ու տարեգիրները չեն, այլ նաև իրենց ժողովրդի անցած ճանապարհի պատմիչ-պատմաբանները, ժողովրդի՝ մեկ անհատի մեջ խորացված, մարմնավորված պատմությունը և նրա՝ ժողովրդի ապագան գուշակող մարգարեները:

Խոսքս այսօր մեծերից մեծի՝ Խաչատուր Աբովյանի մասին է:

Աբովյանի մեջ խտացված են Մաշտոցի դիվանագիտական հանճարը, Խորենացու հայրենասիրական կրակը, Նարեկացու կատարելության աղոթքը:

Աբովյանը մեր ազգային ոգու մարմնացումն է: Եվ եթե ինչ-որ չափով հաղորդվել եմ այդ ոգուն և իմ մեջ կրում եմ այդ ոգու մասունքները, դրա համար պարտական եմ մեր ժողովրդի մեծերից մեկի՝ Աբովյանի ժառանգությանը:

Ի՞նչ էր ուզում Աբովյանը: Ինքն իրեն լուսավորած, եվրոպական քաղաքակրթությանը քաջատեղյակ, եվրոպական մշակույթը, արվեստն ու գրականությունը յուրացրած-մարսած, իր ազգի վերքի մրմուռը սրտում մի մարդ... Ուզում էր. որ իր ժողովուրդը շպրտի պարսկական կործանարար, ստորացնող լուծը և դառնա ի՛ր հողի, ի՛ր երդի, ի՛ր խոփ ու կամի տերը: Տերը դառնա իր պատմության, իր անցյալի մեծագործությունների, ի՛ր պատվի, ի՛ր իրավունքի և ի՛ր ինքնության տերը:

Նա ուզում էր, որ իր ժողովուրդը քաղաքակրթվի, լուսավորվի, բարձրանա, քայլ պահի աշխարհի քաղաքակիրթ ազգերի հետ, սովորի նրանցից և նրանց սովորեցնի իրենը: Նա ճանաչում էր իր ժողովրդին, գիտեր, որ իր ժողովուրդն ի վիճակի է այդ անելու, եթե ունենա մի ուժեղ թիկունք, ուժեղ հովանի: Եվ կար հովանի... Հյուսիսի մեծ հսկան էր, որի զորագնդերն արդեն շարժվում էին հարավ, և օրհնեց նրանց մուտքը Հայաստան: Նա գիտեր, որ ժողովրդի ինքնության առաջին երաշխիքը և հիմքը նրա լեզուն է.

- Ձե՛զ եմ ասում, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդդ, ձեր անուշին մեռնի՛մ, ձեր արևին ղուրբա՛ն, տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք... Ձեր երեսին ղուրբան, հողումն էլ ըլեմ, եկեք, վրես կանգնեցեք. թե ազգասիրությունն ու հայրենասիրությունը ձեզ վնաս տա՝ անիծեցեք ինձ, թե օգուտ՝ օրհնեցեք...

Կարդում ես ու չես իմանում մեկուկես հարյուրամյակ առաջ է ասված, թե այսօր առավոտ:

Եկել, կանգնել ենք քո արձանի առաջ և օրհնում ենք քեզ և ասում ենք. ով մեծ մարգարե, մենք մեր լեզուն պահել-պահպանել ենք և մեր ազգասիրությամբ ու հայրենասիրությամբ, մեր շենք ու շնորհքով, մեր ազատ թռիչքներով մտել ենք աշխարհի քաղաքակիրթ ազգերի շարքը: Եվ նորից ենք ասում, որ քո հոգին թևահարում է համայն Հայաստանի և հայության վրա, բոլոր հայ մանուկների օրորոցների վրա: Եվ էլի ենք ասում, որ քեզ պես վառվռուն տղա և քեզ պես իմաստուն հայր ունեցող ժողովուրդը իր գոյատևության վրա կասկածելու իրավունք չունի, նա քո մեծ հետնորդի ու մեծ մեկնաբանի՝ Հովհաննես Թումանյանի խոսքով աշխարհին պիտի ասի.

- Ես եղել եմ, կամ, կլինեմ, հար ու հավետ, ինչ կա որ...

1918 թ. Մայիսյան հերոսամարտերի վավերագրեր

Գարեգին եպիսկոպոս Հովսեփյան. կոչ ուղղված մարտիկներին

«...Արդեն քանի հազարամյակ հայ ժողովրդի ու նրա առաքելադիր եկեղեցու համար սրբազան է այս օրը՝ իբրև հայրենիքի, ազգի, մեր հավատի ու սուրբ մայրենիի համար ազգովին կռվելու և նահատակվելու օր: Հայոց սպարապետ Վարդանն ու սրբազան ուխտին հավատարիմ նախարարները, հայոց հոգևորականներն ու ազատները, հայ ոստանիկն ու շինականը միակամ ու միահամուռ Ավարայրի դաշտ էին գնացել՝ իրենց հավատն ու ազգային ինքնությունը պաշտպանելու մազդեզանց մոխրամով բռնությունից: Անհավասար էին ուժերը: Պարսից անհամար զորքի և ռազմական փղերի դեմ՝ հայ փոքրաքանակ զորքը, նրա հետ էլ՝ գավազանազեն աշխարհազորը: Սակայն հայությունը կռվեց մինչև վերջին շունչը, նահատակվեց Ավարայրի դաշտում, ապա ողջ մնացած փշրանքներով ամրացավ իր բերդերում ու անտառներում և ապրեց, դիմացավ... Թշնամին, որ պարսիկ ուծացնող կռապաշտն էր, տեսավ և համոզվեց, ապա ականջին օղ արեց, թե հայը կմեռնի-կնահատակվի, սակայն չի հրաժարվի իր հավատից ու ազգային ինքնությունից...

Եվ այսօր, Վարդանանց հերոսական պատերազմի ու սուրբ նահատակության օրը, երբ պիտի ոգեկոչեինք մեր նախնյաց անթառամ հիշատակը, երբ պիտի մեր սրբարաններում խաղաղ ծխար փառքի համար վառված խունկը, մեր հայրենի եզերքը տնքում է նոր բռնակալի ոտքի տակ, մեր արևը մռայլվել է նրա բերած վառոդի ծխից, մեր գետերն ու աղբյուրները վարարել են նրա հղած արյունից... Եթե պարսիկն Ավարայր էր հասել մեր հավատն ու ազգային ինքնությունը վերացնելու, այսօրվա թշնամին մեր ազգի կեսը կոտորել և մյուս կեսն է ուզում ոչնչացնել... Փոխվել են ժամանակները, փոխվել են ազգերն ու ցեղերը: Ավարայրում մեր դեմ կանգնած էր թշնամին, որ միայն բռնակալ էր: Ավարայրում մեր դեմ կանգնած բռնակալն ուզում էր ոչնչացնել մեր լեզուն ու հավատը: Թուրքը մեզ է ոչնչացնում: Ուրեմն, այստեղ նահատակությունն էլ չի կարող օգնել, որովհետև մեր նահատակությունից հետո ոչ մի հայ չի մնա, որպեսզի բարի հիշի սարդարապատյան նահատակությունը: Պատմության դասերն այլևս անզոր են այսօրվա մեր ազգային աղետի առաջ: Այսօր միայն հաղթանակն է, որ պիտի հայությանը փրկի վերահաս կործանումից: Ուրեմն, կռվենք ու հաղթենք և ապրենք՝ ի հեճուկս դարավոր թշնամու...

Կռվե՛նք ու հաղթենք, հաղթենք ու ապրենք»:

Զորավար Մովսես Սիլիկյանի կոչը

«Հայեր, շտապեք հայրենիքն ազատելու:

Հասել է որպեն, երբ յուրաքանչյուր հայ, մոռանալով իր անձնականը, հանուն մեծ գործի՝ հայրենիքի փրկության և իր կնոջ ու աղջիկների պատվի պաշտպանության, պիտի գործի դնի իր վերջին ճիգը՝ թշնամուն հարվածելու համար:

Մենք չէինք ուզում կռվել, հանուն խաղաղության և հաշտության մենք պատրաստ էինք ընդառաջ գնալու ամեն տեսակ զոհողությունների, սակայն մեր տմարդի թշնամին ընթանում է իր ծրագրած ուղիով, նա, ըստ երևույթին, ստրկացնել է ուզում մեզ, բայց իրոք, ուզում է ոչնչացնել մեր բազմաչարչար ազգը: Սակայն քանի որ պիտի ոչնչանանք, ավելի լավ չէ՞, որ զենքը ձեռքներիս փորձենք մեզ պաշտպանել: Գուցե հաջողվում է մեզ կռվով ձեռք բերել ապրելու իրավունքը:

Իսկ որ մենք կարող ենք պաշտպանվել, դա ցույց տվին վերջին կռիվները մեր ճակատում, որ մեզանից թվով գերազանց թշնամին նահանջի է դիմել մեր զորքի հերոսական հարձակման առաջ:

Հարկավոր է մի ճիգ ևս, և թշնամին վռնդված կլինի մեր երկրի սահմաններից, ուր մեր պապերն ու հայրերը երկար տարիներ արյուն-քրտինքով աշխատել են գեթ մի կերպ հայթայթել իրենց օրվա ապրուստը:

Հայեր, ժամանակ չէ դանդաղելու: Բոլոր մինչև հիսուն տարեկան հասակ ունեցողները պարտավոր են զենքի տակ գալու, ես պահանջում եմ բոլորից՝ ներկայանալ իրենց զենքերով ու փամփուշտներով՝ հայրենիքի պաշտպանության համար:

Հայուհիներ, հիշեցեք հինգերորդ դարու փափկասուն տիկնանց, որոնք ոգևորեցին իրենց ամուսիններին դեպի մեծ գործը՝ անմահ Վարդանի կռիվների ժամանակ, հետևեցեք նրանց օրինակներին, եթե չեք ուզում, որ ձեր պատիվը ոտնակոխ լինի, խրախուսեցեք նրանց և արհամարհեցեք այն վախկոտներին, որոնք զանազան պատրվակներով խուսափում են ճակատ գնալուց: Հավաքեցեք նրանց համար ռազմամթերք, հաց, շոր և ուրիշ մթերքներ...

Խորին կերպով համոզված եմ, որ այս իմ կոչը անարձագանք չի մնա և երկու-երեք օրվա ընթացքում կկազմակերպվի մի այնպիսի քաջարի զորաբանակ, որին կհաջողվի վռնդել թշնամուն հայենի հողի սահմաններից և ապահովել հայ ժողովրդի գոյատևումը:

Հանուն բազմաչարչար հայ ժողովրդի ֆիզիկական գոյության,

Հանուն ոտնակոխ եղած ճշմարտության՝

Ոտքի կանգնեցե՛ք: Դեպի գործ, դեպի սրբազան պատերազմ»:

Աշխարհի առաջին հյուպատոսուհին

Աշխարհի առաջին կին հյուպատոսը եղել է ազգությամբ հայ Անահիտ Հովհաննեսի Աբգարյանը (օրիորդական ազգանունը՝ Աղաբեկյան)՝ գրող, հրապարակախոս, 1919-1920 թթ՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Ծայրագույն Արևելքում (Ճապոնիա): Ծնվել է 1859 թ. հոկտեմբերին Ռանգունում (Բիրմա), ըստ որոշ աղբյուրների՝ 1854 թ. Կալկաթայում (Հնդկաստան). իբրև ծննդավայրեր նշվում են նաև Նոր Ջուղա ու Բոմբեյ քաղաքները: Անահիտ Աբգարյանը հայտնի է մի քանի ծածկանուններով. շրջված ընթերցանությամբ Անահիտը դառնում է Տիհանա. բարեհնչունության համար Աբգարյանն այն դարձրել է Տիանա, նաև՝ Դիանա, նաև՝ Տայանա կամ Դայանա: Կրճատ գրվում էր նաև Աբգար կամ Դիանա Ա. (Աղաբեկ):

Անահիտը պարսկահայ Հովհաննես Աղաբեկի ընտանիքի յոթերորդ զավակն էր: Ստացել է անգլիական կրթություն, հայերենը սովորել ինքնուրույն: Հետագայում Անահիտենց ընտանիքը մի խումբ հայերի հետ տեղափոխվում է Կալկաթա: 1889 թ. Անահիտն ամուսնանում է Միքայել Աբգարյանի հետ: Միքայելը ծնվել էր Նոր Ջուղայում, զբաղվում էր նավարկությամբ, միջազգային առևտրով, ածխահանությամբ, հիմնել էր Արևելյան Հնդկաստանից Հոլանդիա բրինձ առաքող ընկերություն: Միքայելը նույնպես տեղափոխվել էր Կալկաթա՝ ընտանեկան գործը շարունակելու: Այնտեղ էլ ծանոթացել էր Անահիտի կամ, ինչպես վերը արդեն նշեցինք, Դայանայի հետ: Նրանք ամուսնանում են Չինաստանի Հոնկոնգ քաղաքում: Նորապսակները մեղամիսն անցկացնում են Ճապոնիայում: Այդ ժամանակ էլ որոշում են մեկընդմիշտ տեղափոխվել Ծագող արևի երկիր: 1890 թ. Ռագունում ծնվում է նրանց առաջնեկը՝ Ռոզան: 1891 թ. ընտանիքը տեղափոխվում է Կոբե քաղաքը, այստեղ ծնվում է նրանց որդին՝ Միքայել կրտսերը: Աբգարյանը հիմնում է առևտրական հաստատություն, ձեռք բերում «Գրանդ Օթել» հյուրանոցը: 1896 թ. ծնվում է երկրորդ դուստրը՝ Ռութը: 1906 թ. ամուսինը մահանում է: Անահիտն ստանձնում է ամուսնու գործերի կառավարումը մինչև տղայի չափահաս դառնալը, որոշում է տեղափոխվել Յոկոհամա: Քառասուն տարեկան հասակում նա գիտեր հայերեն, անգլերեն, Հնդկաստանի երկու լեզուները, ճապոներեն. այդ լեզուներով հոդվածներ էր գրում:

Իբրև Հայաստանի Առաջին Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչ՝ Անահիտ Աբգարյանն իր պարտականությունները կատարել է հրաշալի: Ականատեսները վկայում են, որ նա արտակարգ գեղեցիկ կին էր և երբ ներս էր մտնում դահլիճ, բոլոր դեսպանները ոտքի էին կանգնում:

Աբգարյանը Յոկոհամայում օգնում է հայ գաղթականներին: Հայոց ցեղասպանության հետևանքով գաղթական դարձած մեր բազմաթիվ հայրենակիցներ, ովքեր Հայկական բարձավանդակի արևելյան հատվածից էին, անցնում են Ռուսաստան: Քանի որ այդ հսկա երկիրը պառակտված էր հեղափոխական խլրտումներից ու քաղաքացիական կռիվներից, մեր տարաբախտ հայրենակիցների մի մասը Տրանսսիբիրյան երկաթգծով հատում է Ռուսաստանը, հասնում Վլադիվոստոկ և չինական Խարբին, այնտեղից էլ՝ տեղափոխվում Ճապոնիա՝ սպասելով Ամերիկայի Միացյալ Նահանգներ մեկնելու հնարավորությանը: Դայանա Աբգարը, որ իր ամուսնու առևտրական գործակալությունն օգտագործում էր իբրև հյուպատոսական գրասենյակ, թույլ է տալիս իր գաղթական հայրենակիցներին բնակվել Յամատե թաղամասում գտնվող իր առանձնատանը, օգնում նրանց ժամանակավոր օթևան գտնել, ինչպես նաև մուտքի թույլտվություն ստանալ, նավի և գնացքի տոմսեր հայթայթել: Երբ Միացյալ Նահանգների կառավարությունը խստացնում է ներգաղթի վերահսկողությունը՝ ընդունելով Ջոնսոն-Ռեյդի օրենքը, Դայանան շարունակում է հայերին ուղարկել ԱՄՆ՝ բոլոր հնարավոր միջոցներով: Նա գաղթականների երեխաներին տեղավորում է Յոկոհամայի դպրոցներում:

Տաղանդաշատ և ուսյալ հայուհին զբաղվում է ոչ միայն Ճապոնիայի հետ կապված հարցերով, այլև հայկական պետության ղեկավարներին նամակներ գրում, դիվանագիտության վերաբերյալ խորհուրդներ տալիս նրանց:

Անահիտի աշխարհընկալման ձևավորման վրա մեծապես ազդել են հակիմպերիալիստական տրամադրությունները, իր հայրենիքի՝ Հայաստանի ազատագրության համար մղվող պայքարը, հայ եկեղեցու հանդեպ տածած խոր հարգանքն ու նվիրվածությունը, մարդասիրական իդեալները: Անահիտ Աբգարյանը Ղևոնդ Ալիշանի պես երբեք չի եղել մայր հայրենիքում, ողջ կյանքն ապրել է օտարության մեջ, բայց ամենայն ինչ, որ առնչվում էր Հայաստանին, թանկ ու հարազատ էր նրա համար: Հայուհին իր աչքերով տեսնում էր այն չարիքը, որ Հնդկաստանի ժողովրդին բերում էր Ալբիոնի արքունիքի նվաճողական, ծավալապաշտական քաղաքականությունը, տեսնում էր Բիրմայում անգլիական բանակի գործած դաժանությունները, և այս ամենը, անշուշտ, նրան հիշեցնում էր իր սիրելի ժողովրդին, որը տառապում էր անգլիական լծից անհամեմատ դաժան օսմանյան լծի տակ: Ականատես լինելով Իտալիայի և Գերմանիայի ժողովուրդների՝ հանուն միավորման իրականացվող շարժմանը՝ Անահիտ Աբգարյանը համակ ուշադրությամբ հետևում էր տաճկահայերի ազատագրական շարժման ընթացքին:

Նա ստանում և կարդում էր հայկական, անգլիական, հնդկական, ամերիկյան, ճապոնական մամուլ: Նամակագրական կապեր ուներ աշխարհի քաղաքական, հոգևոր, կրթական բնագավառների կարկառուն գործիչների հետ, ստանում էր տեղեկություններ, մշակում դրանք, հրատարակում գրքեր ու գրքույկներ, հրապարակում հոդվածներ՝ անգլիական, ամերիկյան, ճապոնական մամուլում: Անահիտ Աբգարյանի գլխավոր ստեղծագործություններն են՝ «Դավաճանված Հայաստանը» (1910), «Խաղաղություն և ոչ խաղաղություն» (1911), «Եվրոպական խաչին խաչված Հայաստանը» (1912), «Մեծ չարիք» (1914) գրքերը և «Ողբերգություն Մերձավոր Արևելքում» (1912), «Հայկական ջարդեր» (1912), «Հայաստանի կարիքները» (1920), «Հայաստանի Հանրապետություն» (1920), «Ամերիկյան մանդատը Հայաստանում» (1920) գրքույկները:

Նա քննադատում էր ռուս-ճապոնական և բալկանյան պատերազմները, մերկացնում իմպերիալիստական ագրեսիան, բայց ամենից շատ նրան մտահոգում էր Հայկական հարցը: Տաղանդաշատ հայուհին իր բողոքի ու տագնապի ձայնն էր բարձրացնում ազգակիցների նկատմամբ իրականացվող ջարդերի դեմ և ամեն ջանք գործադրում իր ձայնը մեծ տերություններին լսելի դարձնելու համար: Անահիտը հոգու կսկիծ էր ապրում Հայկական հարցի նկատմամբ աշխարհի հզորների ունեցած շահամոլ վերաբերմունքից: Ահա ինչ է գրում մեր հայրենակցուհին սահմռկեցուցիչ 1915-ից առաջ. «Հայերի սպանդը իրականացվել է թուրքական կառավարության կողմից՝ ամբողջովին ծրագրված, նախապատրաստված և կազմակերպված ձևով: Կարծում եմ, որ առանց եվրոպական երկրների աջակցության և գաղտնի համաձայնության թուրքական կառավարությունը չէր կարող այդքան մեծ մասշտաբներով այդ ահավոր ոճիրը իրականացնել»: Քանի որ 1915-ի ողբերգությունը դեռ տեղի չէր ունեցել, Անահիտը կարծում էր. «Երիտթուրքերի կուսակցությունը պնդում է, որ ազատության, օրենքի, հավասարության գաղափարներն է որդեգրել, բայց կուսակցության լիբերալ ֆրակցիան շատ սակավաթիվ է, իսկ տոտալիտար ֆրակցիան որի գաղափարախոսությունն է պանթյուրքիզմը և ազգայնամոլությունը, հավանաբար գլխավոր քաղաքական ուժ կդառնա»: Փաստորեն տաղանդավոր դիվանագետը կանխատեսել էր իրադարձությունների զարգացումը: Եղեռնից առաջ Անահիտ Աբգարյանը Դ. Ս. Ջորդանին գրած նամակում պնդում էր. «Թուրքիայի կառավարության իշխանության տակ հայերի կյանքը, ունեցվածքը, խաղաղությունն ու անվտանգությունը չեն կարող երաշխավորված լինել: Թուրքական կառավարության խոստումներից ոչ մեկը չիրականացվեց»: «Հայկական հարցը լուծելու մի միջոց կա միայն. Թուրքիայից ազատագրվելը: Հայերը պետք է քրիստոնյա երկրներից օգնություն ստանան, հակառակ դեպքում լրիվ կկործանվեն»:

Անահիտի հիմնական մտավախության պատճառն այն էր, որ եվրոպական մեծ տերությունները, տնտեսական շահերից ելնելով և հետևաբար կարևորելով Թուրքիայի հետ իրենց հարաբերությունները, կդավաճանեն Հայաստանին: Ժամանակը, ցավոք, ցույց տվեց, որ հայուհին ճիշտ էր. աշխարհի քրիստոնյա հզորները, հաշվի առնելով Թուրքիայի հետ հարաբերությունների վատացման դեպքում իրենց կրելիք վնասները, «փոքրիկ Հայաստանին» տված խոստումները դրժեցին:

Դիանան նաև բանաստեղծություններ է գրել, որոնք լույս են տեսել եվրոպական ու ամերիկյան մամուլում:

Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը, ըստ արժանվույն գնահատելով Աբգարի գործունեությունը, 1926-ին արժանացրել է նրան հատուկ կոնդակի՝ հայ ժողովրդի շահերին ծառայելու և դժվար պահերին նրա կողքին լինելու համար:

Անահիտ Աբգարյանը կյանքից հեռանում է 1937 թ. հուլիսի 8-ին Յոկոհամայում: Նրա մարմինն ամփոփված է քաղաքի՝ արտասահմանցիների գերեզմանատանը՝ ամուսնու շիրմի կողքին: Անահիտի մարմարե հաստ տապանաքարին հայերեն և անգլերեն փորագրված ու արծիծով լցված է՝

«ԴԻԱՆԱ ԱՂԱԲԵԿ ԱՊԿԱՐ:

1857 թ. հոկտեմբերի 17-1937 թ. հուլիսի 8:

Հողի խավարից դեպի լույսի փառավոր օր:

Մենք սիրում էինք նրան, բայց Աստված ավելի էր սիրում»:

«DIANA AGABEG APCAR.

October 17th 1859-July 8th 1937.

Out of Earth's Shadows unto Heaven's Glorious day.

We Loved Her, but God Loved Her Best»:

Նշենք, որ Յոկոհամայի՝ արտասահմանցիների գերեզմանատունը քաղաքի տեսարժան վայրերից է;

2010 թ. հոկտեմբերի 18-ին Ճապոնիայում Հայաստանի դեսպանությունը կազմակերպել էր երեկույթ՝ ի պատիվ Դիանա Աբգարի ժառանգների՝ թոռան՝ Մայքլ Աբգարի, և ծոռան՝ Դենիզ Աբգարի (Դիանայի սերունդներն այսօր ապրում են ԱՄՆ-ում՝ Սան Ֆրանցիսկոյում). հոկտեմբերի 17-ին լրացել էր Անահիտ Աբգարյանի ծննդյան 141-րդ տարեդարձը: Երեկույթի մասնակիցները ծաղկեպսակ են դրել մեծ հայուհու շիրմին:

1984 թվականին ճապոնացի հայագետ Հիդեհարու Նակածիման, որ հիմնել է Հայաստանի ինստիտուտը, գտել է Աբգարի 3 գրքերը (հրատարակված 1911-1918 թթ. Յոկոհամայում) և վերջինիս տունը նույն քաղաքում:

Ի դեպ, Անահիտ Աբգարյանը Ճապոնիայում աշխատած միակ հայ դիվանագետը չէ: Անցյալ դարում Ծագող արևի երկրում դիվանագիտական աշխատանքի են նշանակվել հայեր տարբեր երկրներից. 1930-1931թթ. Ճապոնիայում Իրանի դեսպանն է եղել ականավոր դիվանագետ, թարգմանիչ Հովհաննես Խան-Մասեհյանը, իսկ 1956-1958թթ. Ճապոնիայում ԽՍՀՄ դեսպանն էր Իվան Թևոսյանը:

Հրաչյա ԲԱԼՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

Ծովինակ Չալոյանի «Գեղագիտության պատմություն» նոր դասագիրքը

2015 թ. լույս տեսավ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Ծովինար Չալոյանի «Գեղագիտության պատմություն» դասագիրքը, որը նրա երկարամյա արգասաբեր դասախոսական և գիտական գործունեության արդյունքն է: Դասագրքում ներկայացված է գեղագիտական գիտակցության կայացման գործընթացը՝ սկսած հնադարից:

Գեղագիտական մտքի զարգացման գործընթացի դիտարկումը սկսելով արդեն Հին աշխարհից՝ Ծ. Չալոյանը ուշադրությունը կենտրոնացնում է Հին Եգիպտոսում, Շումերում, Բաբելոնում, Չինաստանում և Հնդկաստանում ձևավորված գեղագիտական պատկերացումների մեկնաբանության և վերլուծության վրա: Անդրադառնալով Անտիկ աշխարհին՝ նա ներկայացնում է Հին Հունաստանի, Հռոմի և հելլենիստական դարաշրջանի բազմաթիվ փիլիսոփայական դպրոցների առանձին ներկայացուցիչների գեղագիտական ուսմունքները, իհարկե, այդ գործընթացում հատկապես շեշտադրելով Պյութագորասի, Սոկրատեսի, Պլատոնի և Արիստոտելի դերը: Շարունակելով հետևել գեղագիտական մտքի կայացման գործընթացին՝ Ծ. Չալոյանը ընթերցողին հնարավորություն է տալիս ուսումնասիրել նաև միջին դարերից մինչև XIX դար ընկած ժամանակահատվածում գեղագիտական մտքի բազմազան դրսևորումները, վերջինի ակտիվության արդյունքում ստեղծված տարբեր ազգերի հարուստ հոգևոր ժառանգությունը (Բյուզանդիա, միջնադարյան Եվրոպա, Վերածնունդ, XVII, XVIII, XIX դդ., այդ թվում, դասական գեղագիտության բարձրակետ հանդիսացող Կանտի, Շիլլերի, Գյոթեի, Շելլինգի և Հեգելի գեղագիտությունը): Ընդգրկելով մեծ ծավալի նյութ այդ թվում կենսագրական, փաստագրական, պատմական և այլն, հեղինակը ներկայացնում է այն գեղագիտական հայեցակարգերը, որոնք ուղորդում էին մարդկանց դեպի

➢7

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅԵՐ

Առաջին լուսնագնացի հեղինակը

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼԵՎՈՆԻ ՔԵՄՈՒՐՋՅԱՆ:

Ծնվել է 1921 թ. Վլադիկավկազում (Հյուսիսային Կովկաս), Տրապիզոնից գաղթածների ընտանիքում: 1951 թ. ավարտել է Մոսկվայի բարձրագույն տեխնիկական ուսումնարանը: Տեխնիկական գիտությունների դոկտոր է: Մինչև 1991 թ. հատուկ ինստիտուտի գլխավոր կոնստրուկտորն էր, այնուհետև՝ գլխավոր խորհրդատուն:

Արտամթնոլորտային տրանսպորտային մեքենաշինություն գիտատեխնիկական ճյուղի հիմնադիրն է, Խորհրդային Միությունում կառուցված ու Լուսնի վրա գործող «Լուսնագնացի» հեղինակը:

1970 թվականի նոյեմբերի 17-ին մարդկության պատմության մեջ տեղի ունեցավ մի երևույթ, որը կոնստրուկտորական մտքի սխրանք կարելի էր անվանել: Այդ օրը Լուսնի վրա սկսեց աշխատել մի տրանսպորտային սարք, որը համարվեց մեր դարի քաղաքակրթության հրաշքներից մեկը: «Լուսնագնաց-1»-ը գործեց 10.5 ամիս (հաշվարկած 3.5-ի փոխարեն), անցավ մոտ 11 կմ ճանապարհ, ուսումնասիրեց 8 քառակուսի կմ մակերես, որի շնորհիվ ստացվեցին մոտ 200 ընդհանուր պատկեր, 20 հազար լուսանկար և մոտ 500 կետից «լուսնահողի» նշակազմի անալիզ:

1971 թ. հուլիսին ամերիկյան «Ապոլլոն-15»-ի հետ լուսնի մակերես իջեցվեց «էլէռՎի» տիպի մարդատար լուսնագնացը, նրան հետևեցին նմանների դեսանտը՝ 1972 թ. ապրիլին («Ապոլլոն-16») և դեկտեմբերին («Ապոլլոն-17»-ը): 1975 թ. հունվարի 16-ին դեսանտ իջեցվեց ևս մեկ խորհրդային մոլորակագնաց՝ «Լուսագնաց-2»-ի, որը, ինչպես նրա առաջինը՝ ավտոմատ գործող գիտական շարժակայան էր: Այդ մոլորակագնացների ստեղծումը գիտնականների, ինժեներների, կոնստրուկտորների մեծ կոլեկտիվների գործունեության արդյունքն էր: Դրանք ինժեներական ստեղծագործության ակնառու նմուշներ էին:

«Լուսնագնացների» ի հայտ գալու հետ գիտությունն ընդհանրապես և տիեզերագնացությունը մասնավորապես ստացան մի նոր արդյունավետ միջոց արտամթնոլորտային ուսումնասիրությունների համար: Այդ սարքերի ստեղծման ընթացքում և դրանց շահագործումը Լուսնի վրա՝ տվեցին շատ մեծ նյութ՝ հասկանալու և ծանոթանալու մոլորակագնացության մեքենաների մի շարք հանգույցների կազմի ու նրանց կառուցման սկզբունքների մասին: Ստացվեց մեկ փորձ ևս այդ տիպի տրանսպորտային միջոցների շարժումը, կառավարման սկզբունքները մշակելու և կատարելագործելու համար:

Իսկ այսօր հարգանք մատուցելով դրանք կառուցողներին՝ միաժամանակ հարկավոր է «տուրք տալ» նաև նրանց մասնագետ-հեղինակներին, որոնցից ամենակարկառուն դեմքը «Լուսնագնացների» գլխավոր կոնստրուկտոր Ալեքսանդր Լևոնի Քեմուրջյանն է:

Ի՞նչ կարգի խնդիրներ պետք է լուծեր Ա. Քեմուրջյանը «Լուսնագնացը» պատրաստելիս: Առաջինն ու ամենագլխավորը տիեզերագնացության մեջ համարվում է շարժվող մեքենայի շարժող էլեմենտի և Լուսնի մակերես կազմող լուսնահողի (գրունտի) շփման ապահովումը, որով ստացվում է շարժման ռեակցիա: Իհարկե, չափազանց դժվար էր կոնստրուկտորի համար հաշվել ու հաշվարկել, ընտրել այն ամենը, ինչ վերը թվարկվեց: Է՛լ ավելի դժվար էր ոչնչից ստեղծել գոյություն չունեցողն ու միակ անհրաժեշտը, որն էլ դառնալու էր ապագա մեքենայի հիմնական հանգույցը՝ շարժողի քարշակառչողական կոնստրուկցիան: Իսկ մինչ այդ ոչ մեկը չէր մտածել նման կառույցի հնարավորության մասին:

Լենինգրադում աշխատող Ա. Քեմուրջյանը չկարողացավ ծեռք բերել Ատենֆորդում աշխատող Ջ. Հայլաջյանի քրտնաջան պրպտումների արդյունքում

ստացված տվյալները: Մնում էր ապավինել սեփական հնարավորություններին, պրպտել ու մոդելավորել տասնյակ ու հարյուրավոր հայտնի ու անհայտ կոնստրուկցիաների հանգույցներ, գտնել այն միակը, որն ամենաընդունելին լիներ «ծեռքի տակ» եղած հնարավորություններից:

Այս առումով Ա. Քեմուրջյանը կանգ չառավ մոդելավորման սարքերի թվի ու տեսակների ընտրության առջև; Նա ուսումնասիրեց մեծ թվով անիվային, անվաթրթռուային, քայլող, ոստյուններով շարժվող, ռոտորախոյակային, թռչող և նույնիսկ գլխիվայր շարժվող մեխանիզմներ:

Լուսագնացի համար իբրև շարժամաս ընտրվեց անիվը: Դրանով իսկ Լուսնի վրա, ինչպես և Երկրում, տրանսպորտի պատմությունը սկսվեց անիվի կիրառումից: Անիվը հաղթեց, որովհետև այն ավելի պարզ էր ու հուսալի և, որ ամենակարևորն է, բոլոր մրցող շարժամասերից ամենափոքր քաշն ուներ: Տասուկես ամիս տևող ոդիսականի ընթացքում լուսնագնացն անցավ 10540 մետր ճանապարհ և լիովին արդարացրեց կոնստրուկտորի հույսերը:

Լուսնային ավտոմատի այդպիսի շարժունակությունը հնարավորություն տվեց ուսումնասիրելու անձրևների ծովի մակերևույթի 80.000 քառակուսի մետր մակերես, որն անմիջապես հարում էր վայրէջքի շրջանին: Միաժամանակ կարելի է ասել, որ այդ տարի լուսնային էլեկտրամոբիլը հաջող քննություն բռնեց: Արտաքուստ թվացող պարզության հիմքում ընկած է բավականին խորը մտածված և մեծ պրպտումների արգասիք հանդիսացող շարժիչ անիվի կառուցվածքը: Լուսնագնացի անիվի թմբուկի մեջ զետեղված է էլեկտրական շարժիչը՝ արագության փոփոխման ատամնաանիվային փոխանցման հետ միասին:

Մեր ասֆալտապատ ճանապարհներում էր վայրէջքի շրջանին: Միաժամանակ կարելի է ասել, որ այդ տարի լուսնային էլեկտրամոբիլը հաջող քննություն բռնեց: Արտաքուստ թվացող պարզության հիմքում ընկած է բավականին խորը մտածված և մեծ պրպտումների արգասիք հանդիսացող շարժիչ անիվի կառուցվածքը: Լուսնագնացի անիվի թմբուկի մեջ զետեղված է էլեկտրական շարժիչը՝ արագության փոփոխման ատամնաանիվային փոխանցման հետ միասին:

Մեր ասֆալտապատ ճանապարհներին և փողոցներում հաճախ ավտովթարներ լինում են նույնիսկ այն դեպքում, երբ ճանապարհի վրա միայն մեկ ավտոմեքենա է, իսկ ղեկի մոտ՝ հմուտ վարորդ: Բնականաբար, հարց է առաջանում, ինչպե՞ս լուսնագնացը կարողացավ հաղթահարել խոչընդոտներով լի 10.5 կմ ճանապարհ և ոչ մի ճանապարհային արկածի չհանդիպեց: Դրա մասին հոգ էին տանում խելամիտ ստեղծված ավտոմատները, որոնք լուսնագնացի յուրաքանչյուր ակնթարթային դիրքը համեմատում էին Լուսնի հորիզոնի գծի ուղղությունը պահող սարքի ընդերկայնական և ընդլայնական առանցքների ուղղության հետ: Հենց որ նույնանուն առանցքների միջև եղած անկյունային տարբերությունը հասնում էր վտանգավոր մեծության, ավտոմատն անջատում էր անիվների էլեկտրական շարժիչների սնուցումը և արգելակում լուսնագնացի հետագա առաջխաղացումը: Այդ համակարգի բարձր ճշտությունը ապացուցվեց լուսնային երրորդ օրվա աշխատանքների ընթացքում, երբ շրջագայություն կատարելուց հետո լուսնագնացը բավականին մեծ ճշտությամբ, վերադարձավ վայրէջքի վայրը:

Լուսնային ցերեկների և գիշերների ընթացքում, որոնք կազմում են 14 երկրային օր, լուսնագնացը ենթարկվում է այնպիսի ջերմային տատանման ներգործության, որի տարբերության բացարձակ արժեքը կազմում է շուրջ 300 աստիճան: Այդ պայմանները պահանջում էին, որ նրա ջերմամեկուսացված պատերի հետևում տեղավորված էլեկտրոնային սարքերի համար ստեղծվեին գրեթե երկրային պայմաններ՝ նորմալ ճնշում ու ջերմաստիճան: Չէ՞ որ այդ խելամիտ սարքերը նույնպես Երկրի «զավակներն» են և սովոր են աշխատելու երկրային պայմաններում: Այդպիսի պայմանների ստեղծումը լուսնագնացի ներսում հաջողությամբ իրականացնում էր ռադիոիզոտոպային ջերմային աղբյուրը:

Չնայած իր փոքր չափերին, լուսնագնացն ուներ երկու հեռուստատեսային համակարգ: Լուսնագնացն այն խելամիտ սարքն էր, որի շարժումը Լուսնի վրա, հեռուստակառավարման միջոցով, ղեկավարվում էր շուրջ 400.000 կմ հեռավորության վրա գտնվող անձնակազմի կողմից: Անձնակազմը լուսնագնացի յուրաքանչյուր շարժման հրամանը տալիս էր լուսնային «ճանապարհը» հեռուստատեսային էկրանի վրա լավ ուսումնասիրելուց հետո միայն: Քանի դեռ լուսնագնացը գտնվում էր շարժման մեջ, այդ կապն անընդհատ աշխատում էր: Պարզվում է, որքան ավելի հստակ հաղորդվի պատկերը, այնքան ավելի մեծ քանակությամբ էլեկտրական էներգիա կծախսվի: Լուսնագնացի անձնակազմի համար, հաշվի առնելով էլեկտրական մարտկոցների ծանրաբեռնվածությունը, հաղորդվում էր մյուս հեռուստատեսային կայանով և միայն այն ժամանակ, երբ Երկրից կարգադրություն էր ստացվում:

Լուսնագնացի վրա, բացի թվարկված սարքերից, գործում էին նաև երկու ինքնուրույն լաբորատորիաներ, որոնք իրենց հավաքած հարուստ տեղեկությունները հեռուստակառավարման կապով հաղորդում էին Երկիր:

Եվ այսպես, համոզվելով, որ շարժող անիվային հանգույցը ակնառու առավելություններ ունի, Ա. Քեմուրջյանը որոշեց կանգ առնել անիվատիպ շարժմամբ օժտված մեքենայի տարբերակի վրա: Նախագծվեց և կառուցվեց առաջին նմուշը, որը վեց ամիս անընդհատ փորձարկվում էր Կամչատկայի Կլյուչևսկայա Սոպկա հրաբխային շրջանում: Այնտեղ մինչև օրս էլ դեռ կան քայքայված լավայապատ զգալի տարածություններ, որոնք նման են լուսնային լանդշաֆտներին: Մտցնելով անհրաժեշտ ճշգրտումներ փորձարկված նմուշի մեջ, կոնստրուկտորները 1970 թվականի մայիս-հունիսին պետական հանձնաժողովին ներկայացրեցին վերջնական տարբերակը:

«...Ես, կարելի է ասել, մեքենաշինության բնագավառում ստեղծել եմ նոր մասնաճյուղ՝ «Արտմոլորակային տրանսպորտային մեքենաշինություն...»,- գրում է նա իր կենսագրականում, որը 1995 թվականին ուղարկել էր Հայկական Հանրագիտարանին:

Երբ 90-ական թվականներին առաջին անգամ գաղտնազերծվեց նշանավոր հայի անունը, Արևմուտքը ամեն ինչ արեց նրան հրապուրելու և արտասահման տանելու համար: Սակայն գիտնականը մնաց Սանկտ Պետերբուրգում և շարունակեց ծառայել իր հայրենիքին: Ալեքսանդր Քեմուրջյանը վախճանվեց 1993-ին և թաղվեց Սանկտ Պետերբուրգում՝ Նովո Վասիլևյան կղզու հայկական գերեզմանատանը:

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

➤6 գեղեցիկը և տարածվելով՝ մոտ 2500 տարիների ընթացքում որոշիչ դեր կատարում նրանց գեղագիտական պատկերացումների ձևավորման գործընթացում:

Օրինաչափ ենք համարում հեղինակի կողմից հայ գեղագիտական մտքի ձևավորման և զարգացման գործընթացի առանձնակի կարևորումը, նրա կայացման հիմնական փուլերի մանրամասն վերլուծությունը և դասագրքում «Պատմական Հայաստանի» գեղագիտությանը նվիրված հատուկ բաժնի շարադրումը:

Վերը նշվածը վկայում է Ռ. Չալոյանի «Գեղագիտության պատմություն» դասագրքի արդիականության և կարևորության մասին: Այս ուսումնական ձեռնարկի կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հայալեզու ուսանողը գրեթե չորս տասնամյակ շարունակ զրկված է եղել համաշխարհային գեղագիտական մտքի զարգացումը պարզաբանող դասագիրք ունենալու հնարավորությունից:

Եվ վերջում նշենք, որ դասագրքում ներկայացված նյութն օգտակար կլինի ոչ միայն ուսանողների, այլ նաև գեղագիտական մտքի պատմությամբ հետաքրքրվող յուրաքանչյուր մարդու համար:

Սվետլանա ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ավագ գիտաշխատող

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Գիտության և տեխնոլոգիաների մերձեցում» գիտաժողովը

Սույն թվականի ապրիլի 29-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում մեկնարկեց «Գիտության և տեխնոլոգիաների մերձեցում» գիտաժողովը:

Գիտաժողովը միտված էր արդյունաբերության և գիտության միջև փոխհամագործակցության զարգացմանը:

Գիտաժողովի ընթացքում տեղի ունեցավ 4 նիստ՝ 1. «Համակարգչային տեսողություն» (computer vision), 2. «Մեքենայական ուսուցում» (machine learning), 3. «Տեղեկատվական անվտանգություն» (information security), 4. «Միկրոէլեկտրոնիկա» (microelectronics) թեմաներով. և 3 պանել՝ 1. «Անջրպետների կամրջում. գիտություն, արդյունաբերություն և պետություն», 2. «Կրթություն. պահանջարկ և առաջարկ», 3. «Պայծառ ուղեղ, գաղափար ստեղծող էկոհամակարգ. համալսարաններ, ստարտափեր, աքսելերատորներ և ինկուբատորներ» թեմաներով:

Գիտաժողովի կազմակերպիչն էր ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը: Գիտաժողովն իրականացվում էր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի, ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի օժանդակությամբ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական կենտրոն

Այնտեղ օդն իսկ լցված է ատելությամբ

Բրազիլացի գրոսմայստեր, Բրազիլիայի գործող չեմպիոն Գրիգոր-Սևակ Մխիթարյանը ընթացիկ տարվա մարտի 30-ին բաց նամակով հայտարարել է ս.թ. սեպտեմբերի 1-ից 14-ը Բաքվում անցկացվելիք շախմատի համաշխարհային 42-րդ օլիմպիադային չմասնակցելու իր որոշման մասին:

29-ամյա մեր հայրենակիցը, որ Բրազիլիայի շախմատի հավաքականի կազմում մասնակցել է Խանթա-Մանսիյսկի (2010 թ.), Ստամբուլի (2014 թ.) և Տրոմսի (2014 թ.) օլիմպիադաներին, հայտարարել է, որ չնայած Բրազիլայի շախմատի ֆեդերացիայի նկատմամբ իր բարձր վստահությանը և երկրի առջև իր մեծ պատասխանատվությանը, ինքը որոշել է հրաժարվել մասնակցել Բաքվի օլիմպիադային: Իր այդ որոշումը նա բացատրել է հետևյալ կերպ. «Օլիմպիադայում Բրազիլիան ներկայացնելը ինձ համար մեծ պատիվ է և կարևորագույն պարտականություններից մեկը: Բրազիլիայի մարզական պատիվը պաշտպանելու իմ կոչումը կիրագործվեր նաև այս անգամ, եթե մրցարշավը տեղի չունենար Ադրբեջանում:

Այդ երկիրը երկար-երկար տարիներ տարածքային հակամարտության հիմքի վրա պատերազմում է իմ հայրենիքի՝ Հայաստանի հետ: Հենց այդ երկրի զինվորական սպան 2012 թվականին Բուդապեշտում քնած ժամանակ կացնահարեց հայ զինվորականին: Քաղաքակիրթ աշխարհի կողմից ցմահ բանտարկության դատապարտված ոճրագործը, Բաքվում ոչ միայն ներում ստացավ, այլև ազգային հերոսի կոչում և բազում նյութական բարիքներ:

Իմ նամակը նպատակը չունի ազգային թշնամանք բորբոքելու, սակայն հիմք է ծառայում ընդունել մի որոշում, որը տվյալ պարագայում, իմ կարծիքով, լավագույնն է և ճշմարիտը: Ես ինձ լավ չեմ զգա Ադրբեջանում, գիտակցելով, թե որքան թշնամական է վերաբերմունքը իմ հայրենիքի նկատմամբ:

Սրտի ցավով ես հրաժարվեցի Բրազիլիայի հավաքականի կազմում խաղալ Բաքվում:

Ինձ ճանաչող մարդիկ շատ լավ գիտեմ, թե ինչ կարևոր տեղ է բռնում շախմատն իմ կյանքում: Սակայն իմ խիղճը և ծագումը ինձ արգելում են խաղալ մի երկրում, որտեղ ամենուր ատելություն է սերմանվում իմ ժողովրդի նկատմամբ:

Այլ կերպ ասած, ես համալրելու եմ այն երկրպագուների շարքը, որոնք ամբողջ հոգով սատարելու են օլիմպիադայում Բրազիլիայի շախմատի հավաքականին»:

Ավելացնենք, որ Գրիգոր-Սևակ Մխիթարյանը 1999-ին առաջին անգամ այցելել է իր պատմական հայրենիքը: 12-ամյա շախմատիստ Գրիգոր-Սևակն այդ ժամանակ մասնակցեց համահայկական խաղերին:

Գրիգոր-Սևակը 2003 և 2004 թվականներին եղել է մինչև 20 տարեկանների Բրազիլիայի շախմատի չեմպիոն: 2013 և 2016 թվականներին նվաճել է մեծահասակների շախմատի չեմպիոնի կոչումը:

Գրոսմայստեր Գրիգոր-Սևակ Մխիթարյանի մայրը ծնվել է Բրազիլիայում, հայրը՝ Լիբանանում: Գրիգոր-Սևակը Սան-Պաուլոյում ավարտել է հայկական դպրոցը:

☺

Մոսկվայի կենտրոնում ավտոմեքենայի վարորդ մի հետիոտնի հարցնում է.

- Ներեցեք, ինչպե՞ս կարող եմ գնալ Սադովոե փողոց:

- Ամենակարճ ճանապարհը՝ հիմա թեքվում եք ձախ, իսկ հետո վճարովի փողոցով՝ ուղիղ:

- Այդ ի՞նչ վճարովի փողոց է,- զարմանում է վարորդը:

- Գիտեք ինչ, այդ փողոցը ընդհանրապես փակ է: Պետավտոտեսուչներն այնտեղ մշտապես հսկում են: Տուգանքը վճարում ես և ճանապարհդ շարունակում:

☺

Ռեստորանի մշտական հաճախորդը միշտ առատ վարձատրում էր սեղանը սպասարկող մատուցողին: Մի անգամ գալով ճաշելու, նա նկատեց, որ մատուցողն ուրիշ է:

- Իսկ ո՞ւր է նախկին երիտասարդ մատուղոցը,- հետաքրքրվեց նա:

- Նա թղթախաղում տանուլ տվեց ձեզ,- պատասխանեցին նրան:

☺

- Սոնա, ինչո՞ւ դու մամային ասացիր, որ ես տուն եմ եկել առավոտյան:

- Ես նման բան չեմ ասել, հայրիկ ջան: Ես ասացի, որ երբ դու եկել ես, ժամացույցին չեմ նայել, որովհետև նախաճաշ էի պատրաստում:

☺

Հայտարարություն. «Կրկեսը աշխատանքի է ընդունում ևս 10 օդային մարմնամարզիկների»:

ՄՈՌԱՑԵԼ ԵՆ

Ամազոնի վրա ոչ մի կամուրջ չկա, իսկ գետի երկարությունը 7 հազար կիլոմետր է: 2010 թվականին կամուրջ կառուցվեց նրա վտակներից մեկի՝ Ռիու Նեգրուի վրա: Կամրջի երկարությունը 3,595 մետր է:

☺

Երիտասարդը պատերը ծածկում է ձայնամեկուսիչով: Կողքին կանգնած է պապը:

- Պապ, ի՞նչ ես կարծում, 5 սանտիմետր հաստությունը բավական կլինի՞:

- Չէ, հավանաբար հերիք չէ, ախր հարևանները շատ աղմկարար են:

- Պապիկ, իսկ ժամանակին դու ինչպես էիր ձայնամեկուսացնում պատերը:

- Շատ հասարակ, անանուն նամակ էի գրում անվտանգության կոմիտե:

ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

- Եկամուտների մասին դուք հայտարարության մեջ նշել եք, որ վաստակել եք 600 հազար, իսկ մեր տվյալներով այժ ժամանակում դուք ծախսել եք ամենաքիչը 8 միլիոն:

- Ի՞նչ է սա նշանակում, պարոն պաշտոնյա:

- Ի՞նչ է նշանակում, ի՞նչ է նշանակում… ուղղակի ծայրը ծայրին չեմ հասցնում:

☺

Մի դժբախտ հարբեցող կար, հենց որ խմում էր, առավոտյան հայտնվում էր սթափարանում: Մի օր որոշեց առնել կես լիտր և խմել տանը: Ասածը արած էր: Գնեց կես լիտր օղի, եկավ տուն, հանվեց, մտավ վերմակի տակ ու խմեց: Առավոտյան աչքերը բացեց սթափարանում:

Մոտենում է ոստիկանին և հարցնում.

- Ախր, այս ո՞նց պատահեց, ես օղին խմեցի տանը, վերմակի տակ…

- Այո, այո, այդպես էլ կա, մենք քեզ վերցրինք, երբ վերմակով փաթաթված, գնում էիր երրորդ շշի հետևից:

☺

Լավատեսն ու վատատեսը դատողություններ են անում բարձր հարկերի, անբացատրելի կենցաղային ծառայությունների մուծումների չափերի մասին: Հետևությունը մեկն էր. լավ կյանքի հույս չկար:

- Այս բարձր հարկերի, վճարումների այս խելահեղ չափերի պայմաններում մենք շուտով մուրացիկ կդառնաք,- եզրակացնում է լավատեսը:

- Մուրացի՛կ,- ծաղրում է վատատեսը,- ներիր, խնդրում եմ, իսկ ումի՞ց ես մուրալու:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը հայտարարում է մրցույթ ընդհանուր և համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատողի (0,5 դր.) թափուր տեղի համար:

Դիմողները պետք է ունենան գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտական աշխատանքներ ղեկավարելու հմտություն:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,
բ) լուսանկար,
գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
դ) ինքնակենսագրություն,
ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը.
զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճենը.
է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,
թ) հրատարակված աշխատանքների ցանկ,
ժ) գիտական կոչումը հաստատող փաստատաթուղթ (դրա առկայության դեպքում),
ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ ամսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորչի 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. (060) 62-35-77:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14: Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448: Ստորագրված է տպագրության՝ 5.05.2016 թ.: Տպաքանակը՝ 500:
gitutyun@sci.am "ТИТУТЮН" ("Наука") газета НАН РА